ԽՈՋԱԼՈՒԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ

(1992 թ. փետրվար-մայիս)

ՀԱԿՈԲՅԱՆ Հ. Ա.

Արցախյան հիմնահարցի վերածնունդը, բնականաբար, իր ազդեցությունն ունեցավ Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում: Այս շրջանում ադրբեջանական պատմագրությունը պատմական փաստերի խեղաթյուրման միջոցով հանդես էր գալիս իբրև «զոհ» «հայկական ագրեսիայի ձեռքերում»:

1988 թվականը նշանավորվեց նրանով, որ արցախահայությունը ոտքի ելավ՝ տեր կանգնելու Ադրբեջանի կազմից դուրս գալու և մայր հայրենիքին վերամիավորվելու իր արդար պահանջին:

Ի տարբերություն խորհրդային շրջանի ադրբեջանական պատմագրության դիրքորոշման, ուր ամեն ինչ ասվում էր ենթատեքստերով, իսկ մամուլը համեմատաբար լուռ էր, ադրբեջանական հետխորհրդային պատմագրության մեջ այս շրջանում նկատվում են մարտնչողական և ագրեսիվ տրամադրություններ: Սկսած 1980-ական թվականների վերջերից՝ ադրբեջանցիները հանդես եկան հայ էթնոսի ինքնությունը հերքելու թեզերով: 1921 թ. ստալինյան հայտնի որոշումից հետո Արցախի հիմնահարցի վերաբացումը (1948 թ., 1965-1966 թթ., 1988 թ.) ԽՍՀՄ-ը որա-կեց որպես անջատողական քայլ խորհրդային իշխանության դեմ: Սա պայմանավորված էր նրանով, որ Բաքվին ձեռնտու չէր Արցախի հիմնախնդրին համամիութենական հնչեղություն տալը: Ըստ նրանց՝ դա իրենց ներքին խնդիրն էր, և այն սեփական ուժերով ու կարճ ժամանակում կարգավորելու հույս ունեին:

Արցախին տիրելու ադրբեջանական իշխանությունների նկրտումները 1980-ականների վերջերին հասան գագաթնակետին. առավել հեղինակություն վայելող ադրբեջանական գործիչներն անգամ անձնական վիրավորանքներ էին ուղղում հայ հասարակական-քաղաքական գործիչների հասցեին:

1988 թվականից հետո ադրբեջանական պատմագրության մեջ հակահայկական նոր ալիք է բարձրանում: Իսկ 1992 թ. փետրվար-մայիս ամիսներին հայկական ռազմական ուժերի սկսած հակահարձակումները, Խո-ջալու և Շուշի քաղաքների ազատագրումը նոր հիստերիա հաղորդեցին հակահայկական տրամադրություններին: Բնականաբար, այս հարցում ադրբեջանցի պատմաբանների հաղորդած տեղեկությունները մեծ մասամբ չէին համապատասխանում իրականությանը:

Հետաքրքիր է Արցախյան պատերազմի, միմյանց հաջորդող ու տրամաբանորեն միմյանց հետ կապված Խոջալուի և Շուշիի ռազմական գործողությունների դիտարկումը ադրբեջանցի պատմաբանների ու հասարակական-քաղաքական գործիչների գնահատմամբ: Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը 1998 թ. մարտի 26-ի հրամանով մարտի 30-ը հայտարարել է ադրբեջանցիների «ցեղասպանության օր»: Նախագահը հրամանում քա-

ղաքական գնահատական է տալիս նաև 1905-1907 թթ., 1918-1920 թթ., 1948-1953 թթ., 1988-1993 թթ. դեպքերին. «Հայկական ազգայնամոլ շրջանները, որպես թիկունք ունենալով գերտերություններին, կազմակերպել են ադրբեջանցիների ցեղասպանություն»: Այնուհետև նույն հրամանի մեջ պատմական էքսկուրս է անցկացվում հայերի կատարած «դաժան գործողությունների» մասին: Խոջալուին առնչվող հատվածում նշվում է. «1992 թ. փետրվարին հայերը կազմակերպեցին չտեսնված վրեժխնդրություն: Դա արյունալի ողբերգություն է, որ մտել է մեր պատմության մեջ որպես Խոջալուի ցեղասպանություն, որն ավարտվել է հազարավոր ադրբեջանցիների բնաջնջմամբ, նրանց գերեվարմամբ. քաղաքը ջնջվել է երկրի երեսից»[1]:

Խոջալուի պատմական իրադարձությունների գնահատականը, ներառյալ՝ Արցախի պատմության լուսաբանումը, ադրբեջանական պատմագրության մեջ խորապես հակասում է պատմագիտության ընդունված սկզբունքներին ու խնդրի լուսաբանման մեթոդաբանությանը:

Հրապարակախոս Թահիր Գաշիմզադեն Խոջալուի «դեպքերը» համե-մատում է Բեսլանի հայտնի ողբերգության հետ՝ միաժամանակ մեղադրելով Ռուսաստանին «անջատողական» շարժումները հովանավորելու մեջ[2]: Հեղինակը մասնավորապես նշում է. «Մինչև Բեսլանի ողբերգությունը Խոջալուում նախադեպ արդեն եղել էր, երբ հայկական զորքերի կողմից ոչնչացվեցին հարյուրավոր մարդիկ, այդ թվում՝ կրծքի երեխաներ: Թե՛ Խոջալուում և թե՛ Բեսլանում նույն ձեռագիրն է: Երկու դեպքում էլ անցկացվել է բնակչության վերացման ու ահաբեկման ակցիա հակամարտող կողմերի միջև հակասությունները խորացնելու նպատակով»:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ամսագրում Խոջալուի իրադարձություններին տրվում է հետևյալ գնահատականը. «…փաստերը ապացուցում են, որ Խոջալուի քաղաքացիների բնաջնջումը, որ տեղի է ունեցել 1992 թ. փետրվարի 25-26-ին, ներառյալ՝ երեխաներ, ծերեր և կանայք, նպատակաուղղված են զանգվածային ոչնչացման՝ այն պատճառով, որ նրանք ադրբեջանցիներ են: Ադրբեջանական տարածքներում Խոջալուն ընտրվել էր որպես ելակետ՝ հետագա օկուպացիայի և էթնիկ մաքրումների համար՝ ստեղծելով վախ սարսափելի եղեռնից առաջ»[3]:

Այդ ժամանակի ադրբեջանցի ուսումնասիրողները և մամուլը հիմնականում հակասական տեղեկատվություններ են հաղորդում Խոջալուի «հարցի» շուրջ, որը վկայում է ներքին քաղաքականության մեջ որոշ քաղաքական ուժերի շահաբաժինների և իշխանության գալու ձգտումների մասին:

---

[1] *Карабахский конфликт: азербайджанский взгляд, сб. статей, М., 2006, с. 237.*

[2] **Тахир Гашим-заде,** *Ходжалы и Беслан. Трагические итоги вековечной политики (Эхо, 10.09.2004).*

[3] *Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyini "Diplomatiya Aləmi" jurnalı, Xьsusi Buraxılış, Bakı, 2005, s. 54.*

Էլմիրա Ախունդովան իր գրքում, որտեղ ամփոփված էին ժամանակի մամուլի հրապարակումները, Խոջալուի մասին գրում է. «Վերջին ժամանակներում Խոջալուում են հաստատվել Ֆերգանայից գաղթած թուրք-մեսխեթցիներ ու Հայաստանից արտաքսված ադրբեջանցիներ, որի հետևանքով գյուղաքաղաքը մեծացել է ու հանրապետական նշանակության կարգավիճակ ստացել: Այստեղ բնակչության թիվը հասնում էր 7000-ի: 1992 թ. փետրվարի 26-ին հայկական ավազակային խմբավորումները ԱՊՀ «փառապանծ» բանակի օգնությամբ մաքրեցին այս քաղաքը երկրի երեսից»[4]:

Ադրբեջանցի մեկ այլ հեղինակ՝ Խավվա Մամեդովան, Խոջալուի իրադարձությունների մասին հետևյալն է գրում. «Ունենալով ինքնապաշտպանական ջոկատ, 50-60 ավտոմատ ու որսորդական հրացան, կտրված լինելով աշխարհից՝ քաղաքը (Խոջալուն - Հ. Հակոբյան) հայտնվել էր մինչև ատամները զինված հայ զինվորների շրջափակման մեջ, ովքեր ունեին ժամանակակից ծանր հրետանի»[5]: Հեղինակը ոչ տրամաբանական ենթադրություններ է կատարում նաև 366-րդ մոտոհրաձգային գնդի՝ Խոջալուի դեպքերին և ընդհանրապես ռազմական գործողություններին մասնակցության վերաբերյալ: «1991 թ. հոկտեմբերի 30-ից մարտիկները 366-րդ գնդի մասնակցությամբ բռնազավթել են Տուգ և Սելակատին գյուղերը…»[6]: Նշենք միայն, որ հիշատակված մոտոհրաձգային գունդը այդ ժամանակ դեռևս գտնվում էր Ադրբեջանի ղեկավարման ներքո: Գնդի հրամանատարությունը միայն 1992 թ. հունվարի 16-ին էր հայտարարել, որ չի ենթարկվելու Ադրբեջանի ղեկավարությանը[7]: Խոջալուի իրադարձություններին վերաբերող մասում հեղինակը մեջբերում է ականատեսի խոսքերը, որտեղ ականատեսը՝ Ալեմդար Աբասովը, նշում է. «…երբ Խոջալուի 150 բնակիչները, ովքեր հասցրել էին դուրս գալ շրջափակումից, սկսեցին շարժվել Աղդամի ուղղությամբ և ընկան ծուղակի մեջ, որը կազմակերպել էին զինված հայերը…»[8]: Բայց Աղդամի կողմից այդ մարդիկ չէին կարող հարձակման ենթարկվել հայ զինվորների կողմից զուտ այն պատճառով, որ դեպի Աղդամ տանող ճանապարհը՝ իր շրջակա տարածքով, Ադրբեջանի ազգային ճակատի ղեկավարության ներքո էր:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության արտաքին քաղաքականության պլանավորման և ռազմավարական ուսումնասիրությունների վարչության աշխատակից Քամիլա Մամեդովան իր հոդվածում («Խոջալու ողբերգություն. ոճիրը չպետք է արդարացված լինի») ադրբեջանական պատմագրությանը հատուկ ձևով ներկայացնում է Հայաստանի «մերժողական» դիրքորոշումը՝ կապված Խոջալուի իրադարձությունների հետ: Նա մասնավորապես նշում է. «Հայաստանի ղեկավարությունը հերքում է հակամարտության ընթացքում իրենց կատարած որևէ հանցանք,

---

[4] **Эльмира Ахундова,** *Ходжалы. Хроника геноцида, Баку, 1993, с. 4.*
[5] **Хавва Мамедова,** *Ходжалы: Шехиды и Шахиды, Баку, 2004, с. 22.*
[6] Նույն տեղում, էջ 21:
[7] **Александр Манасян,** ***К****арабахский конфликт, ключевые понятия и хроника, Е., 2005, с. 132-133.*
[8] **Хавва Мамедова,** նշվ. աշխ., էջ 22:

ներառյալ՝ Խոջալուի իրադարձությունները՝ նենգափոխելով փաստերը և առաջ քաշելով դեպքերի վերաբերյալ սեփական մեկնաբանությունները: Այդուհանդերձ, հայկական քարոզչամեքենան երբևէ չի կարողանա նենգափոխել փաստերը, որոնք իրականում հայկական կողմի ներկայացրածի ճիշտ հակառակն են»[9]: Ադրբեջանի տրամադրության տակ եղած փաստերը, որ ներկայացվում են ինչպես գիտական, այնպես էլ հասարակության շրջաններին, հիմնականում լուսանկարներ են ու ականատեսների վկայություններ, որոնք համեմված են հակահայկական մտացածին մեկնաբանություններով: Հրատարակված են նաև մի շարք փաստաթղթերի ժողովածուներ, մենագրություններ, դրանցում առկա է նույն համատեքստը, և որպես կանոն՝ մեջբերում է կատարվում Հ. Ալիևի խոսքերից (բնաբան), կամ ներկայացվում է «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին» Ադրբեջանի Հանրապետության նախագահի հրամանագիրը:

«Ազերինֆորմը» նշում է. «Ադրբեջանի Ազգային ճակատի տեղեկատվական կենտրոնը հաղորդում է, որ փետրվարի 25-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, 366-րդ ռուսական բանակի մոտոհրաձգային գունդը, որը տեղավորված էր Խանքենդիում, հայկական զորամիավորումների հետ սկսեց Խոջալու գյուղի վրա տանկային հարձակում, և որը մինչ այդ երկու շաբաթ գտնվում էր շրջափակման մեջ: Փետրվարի 26-ին՝ առավոտյան ժամը 5-ի սահմաններում, Խոջալուն ընկավ: Ինչպես հաղորդում է Ադրբեջանի ներքին գործերի նախարար Թոֆիկ Քերիմովը, դրա հետևանքով մահացել է 100 ադրբեջանցի, վիրավորվել են 200-ը: Մի մասն էլ պատսպարվել են շրջակա լեռներում…»[10]:

Փետրվարի 28-ից սկսած՝ Խոջալուի իրադարձությունների մասին հաղորդագրություններն այլ պատկեր ունեն: Այսպես, "*Бакинский рабочий*" թերթը գրում է. «Ներքին գործերի նախարարության մամլո ծառայությունը, հասկանալով, որ Խոջալուի կորուստը Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովի համար նշանակում էր քաղաքական ձախողում, հենց նույն օրը տեղեկատվություն տարածեց, որում հաստատվում էր, որ «366-րդ գնդի և հայկական զորքերի հարձակումը Խոջալուի վրա հետ է շպրտվել, և հիմա գյուղը ադրբեջանցիների հսկողության ներքո է»: Սակայն այս տեղեկատվությունը հերքեց Ազգային ճակատի տեղեկատվա-կան ծառայությունը՝ հաղորդելով, որ «երկու բեռնատար ավտոմեքենա՝ Խոջալուում զոհվածների դիակներով, հասել է Աղդամ»: Կռվում զոհվել են նաև Խոջալուի օդանավակայանի ղեկավարը, դատախազը և քաղաքապետը: Խոջալուի անկումից հետո Ադրբեջանի մայրաքաղաքում ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ…»[11]:

Ներկայացնենք "*Бакинский рабочий*" թերթի ևս մի հաղորդագրություն: Ադրբեջանի Ազգային խորհուրդը մարտի 3-ին հրավիրված արտա-

---

[9] **Kamila Mammadova,** *Desk Officer of the Foreign Policy Planning and Strategic Studies Department, MFA of the Republic of Azerbaijan, Khojalu Tragedy: The Perpetrators of the Massacre cannot be Vindicated (based on the documents distributed by Azerbaijan in international organizations),* http://www.irs-az.com/gen/n19/n19_5.htm

[10] *Азеринформ, 26.II.1992.*

[11] *Бакинский рабочий, 28.II.1992.*

հերթ նստաշրջանի ժամանակ ընդունեց մի ուղերձ՝ «Աշխարհի խորհրդարաններին», որտեղ կոչ էր անում դատապարտել Ղարաբաղի ադրբեջանցի բնակչության նկատմամբ հայերի կազմակերպած ցեղասպանությունը: Այդ ուղերձում մասնավորապես ասվում է. «Խոջալու քաղաքը 6000-անոց բնակչությամբ (հիշեցնենք, որ Է. Ախունդովան 7000 թիվն էր նշել - Հ. Հ.) ջնջված է երկրի երեսից: Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը պետական քաղաքականության մակարդակով ահաբեկչություն է հռչակել»[12]:

Ավելին՝ Ռ. Հաջիևը, որը Ադրբեջանի Ազգային ճակատի Աղդամի բաժանմունքի անդամներից էր, նշում է. «Մենք կարող էինք օգնել խոջալուցիներին՝ կային և՛ ուժեր, և՛ հնարավորություններ: Բայց հանրապետության կառավարությունը ցանկանում էր ցույց տալ ժողովրդին, որ իրենք ուժեր չունեն, որ կրկին օգնության կանչեն ԱՊՀ զորքին, որի միջոցով ճնշելու էին նաև ընդդիմությանը»[13]:

Այստեղ ավելացնենք, որ ռուսական 366-րդ մոտոհրաձգային գունդը չէր մասնակցում ռազմական գործողություններին և ուներ միայն կրակային կետերի ճնշման հրաման՝ առանց զորամասից դուրս գալու իրավունքի, իսկ գնդի հրամանատարությունը պահպանում էր այդ հրամանը: Մինչև մարտի կեսերը Ստեփանակերտի բնակչությունը մի քանի անգամ հնարավորություն է ունեցել ականատես լինելու ադրբեջանցիների և 366-րդ գնդի փոխհրաձգությանը[14]: «Անկեղծ ասած,- գրում են Հայկ Դեմոյանը ու Լևոն Մելիք-Շահնազարյանը *“Ходжалинское дело: Особая папка”* գրքում,- 366-րդ գնդի մասնակցությունն այնքան էլ հարկավոր չէր, որովհետև հայերն ունեին իրենց սեփական զրահատեխնիկան»[15]:

Այդ ժամանակ ադրբեջանական կողմը շրջանառության մեջ էր դրել հերթական առասպելը, որ արդարանա իր հայրենակիցների առջև Խոջալուի պարտության համար, ցույց տա, որ Խոջալուի գրոհի ժամանակ հիմնահարցի սկզբնավորումից ի վեր՝ առաջին անգամ, հայկական զինված ուժերի օգտագործած ռազմական զրահատեխնիկան 366-րդ գնդի զորքերինն էր:

Ադրբեջանական կողմից հնչող անհիմն հայտարարություններից են, թե հայկական կողմը չի նախազգուշացրել գրոհի մասին: Սակայն, ինչպես տեղեկացնում է *“Независимая газета”-ն*, «Հումանիտար միջանցքի մասին ադրբեջանցիները տեղեկացվել են հայկական կողմից բարձրախոսների օգնությամբ: Բայց չի բացառվում, որ Խոջալուի բնակչության մեծ մասը չի լսել այդ հայտարարությունները»[16]: Իրականում հնարավոր է, որ բնակչության որոշ մասը իրազեկված չլիներ, սակայն ցանկության

---

[12] Նույն տեղում, 3.III.1992:
[13] *Известия, 12.IV.1992.*
[14] Տե՛ս, **Гайк Демоян, Левон Мелик-Шахназарян,** *Ходжалинское дело: особая папка, Е., 2003, с. 19.*
[15] Նույն տեղում:
[16] *Независимая газета, 18.VI.1992.*

դեպքում քաղաքի ղեկավարության համապատասխան աշխատակիցները նրանց կարող էին տեղեկացնել:

Շրջափակված Ստեփանակերտից հայկական ռազմուժի հակահարձակումներն ու ադրբեջանական կրակակետերի վերացումը պսակվեցին հաջողությամբ: Ռազմական պատմաբան Ջ. Արասլին նշում է, որ հայկական ուժերը, հենվելով ռուսական 366-րդ գնդի տեխնիկայի վրա, որը նախօրեին տրամադրվել էր հայկական կողմին, փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը վերցրին Խոջալու քաղաքը և օդանավակայանը[17]: Սակայն Ադրբեջանի մեղադրանքներն ամբողջովին անհիմն էին, քանի որ ԼՂՀ պաշտպանության բանակը իրականացնում էր իր պատմական հայրենիքի՝ Արցախի անվտանգության ապահովումը՝ Շուշիից և Խոջալուից իրականացվող անընդմեջ հարձակումներից: Պետք է փաստել, որ Խոջալուում զոհված ադրբեջանցի բնակչությունը դարձել էր պաշտոնական Բաքվի ներքաղաքական կեղտոտ խաղերի զոհը:

Խոջալուի դեպքերի ժամանակ և հատկապես դրան հաջորդող փուլերում ադրբեջանական պատմագրության մեջ «մեղավորները», ինչպես միշտ, հայերն էին, թեև «մեղքի մեծ բաժին» է հատկացվում նաև Ռուսաստանին[18]:

Խոջալուի դեպքերին հաջորդող ռազմական խոշոր գործողությունը Արցախի համար կարևոր նշանակություն ունեցող Շուշի քաղաքի ազատագրումն էր: Այդ փաստերի լուսաբանումը ադրբեջանական պատմագրության ավանդական տեսանկյունից ներկայացվում է որպես «հայկական ագրեսիա»: Քաղաքի գրավման ռազմական գործողությունները ներկայացված են այնպես՝ իբր հայկական մեծաքանակ ուժերը լայնածավալ գործողություն են սկսել Շուշիի ուղղությամբ այն ժամանակ, երբ Ադրբեջանի պաշտպանության նախարար Ռ. Գազիևը հրամայել է հիմնական զորքերը հանել Շուշիից ու տեղափոխել Բաքու, իսկ քաղաքում մնացել էր Շուշիի քաղաքային գումարտակը[19]: Մնացած դեպքերում և մեր ձեռքի տակ եղած ադրբեջանցի պատմաբանների ուսումնասիրություններում Շուշիի ազատագրման մասին որևէ մեկնաբանություն կամ փաստարկ չկա: Միայն յուրաքանչյուր տարի՝ մայիսի 9-ին, ադրբեջանական լրատվամիջոցների համացանցային կայքէջերում հայտնվում են այս կամ այն քաղաքագետի կամ պատմաբանի՝ հայերի հասցեին ուղղված ոչ բարեկիրթ հարցազրույցներ՝ կապված Շուշիի ազատագրման հետ:

Ակներև է, որ Խոջալուի ազատագրումը ուղղակիորեն ճանապարհ բացեց Շուշիի ազատագրման համար, և այս իրադարձությունը ադրբեջանական պատմագրության մեջ գնահատվեց որպես հայկական ագրեսորական քաղաքականություն՝ ընդդեմ Ադրբեջանի, որ շարունակվում է մինչ օրս:

---

[17] **Араслы Дж.,** *Армяно-азербайджанский конфликт: военный аспект, Баку 1995, с. 16.*

[18] *Карабах, Национальная Академия наук Азербайджана (Институт археологии и этнографии, Баку, 2004, с. 201).*

[19] **Араслы Дж.,** *նշվ. աշխ., էջ 18:*

ОСВОБОЖДЕНИЕ ХОДЖАЛУ И ШУШИ В ОСВЕЩЕНИИ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

(февраль – май 1992 г.)

АКОПЯН А. А.

Резюме

Азербайджанская трактовка рассматриваемых событий являет собой фальсификацию исторических реалий и фактов. Подобная историографическая позиция позволяет им утверждать, что действия армянской стороны подпадают под определение геноцида. Однако массовое истребление населения Ходжалу было предпринято именно местными азербайджанскими властями, попытавши-мися возложить вину за содеянное на армянских воинов-освободителей (азатамартиков). При этом, анализируя ходжалинские события, азербайджанская сторона инкриминирует обвинения и в адрес российских Вооруженных сил, якобы принимавших участие в операции по освобождению Ходжалу.